# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

# ՈՐՈՇՈՒՄ

30 հունիս, 2020 թվականի № 21-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՌԱԴԻՈԾՐԱԳՐԵՐԻ՝ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՂՈՐԴԱՅԱՆՑԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի կողմից 19.06.2020թվականին ներկայացված թիվ Ռ/20 01-44 գրությունը՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության «Առաջին ծրագիր» ռադիոծրագրի՝ 2020 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանկը՝ համաձայն սույն որոշման № 1 հավելվածի:

2. Հաստատել Ընկերության «Երկրորդ ծրագիր» («Իմ ռադիո») ռադիոծրագրի՝ 2020 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանկը՝ համաձայն սույն որոշման № 2 հավելվածի:

3. Հաստատել Ընկերության ««Արևիկ» մայրաքաղաքային սփռման» ռադիոծրագրի՝ 2020 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանկը՝ համաձայն սույն որոշման № 3 հավելվածի:

4. Հաստատել Ընկերության «Հոգևոր-մշակութային» ռադիոծրագրի՝ 2020 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանկը՝ համաձայն սույն որոշման № 4 հավելվածի:

5. Հաստատել Ընկերության մշակութային առցանց ալիքի՝ 2020 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում հեռարձակման համար նախատեսված հաղորդացանկը՝ համաձայն սույն որոշման № 5 հավելվածի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

30 հունիս, 2020 թվականի

ք. Երևան